

293. Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ԵԿԵՂԵՍԷՆ արեմայան պատին, արաաքուստ, ագուցված մաշված խաչքարի սակին.

ԵՅԻ Զ Կ Ե Կ Կ
ԹԻՆՈՐՈՂ ԿՆԶԱԿԵՆ
ՄԱԿԻՄԱՍԱՍԶԻՉԻՍ

ԿԱՆԿՆԵՑԻ ԶԵԱԶՍ ԻՈ ՓՐԿՈՒԹԻ
ՀՈԳՈՅՆ ՀԱԽԻՆ ԻՄ ԻՐ . ԵԻՈ ՄԱԽԻՆ
ԻՄ ԽՈՒՈՒՆ:

Լուսանկ. 116

294. Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ԵԿԵՂԵՍԷՆ ներսում, աժապանի զլխին.

Շնորհաւ աւննազարին Աւսածոյ, հաւր և ուղուոյ և. հոգւոյն ուրոյ, ի թուոյ
մարտիպարեան բանին Աւսածոյ :ՌՈՂԻ: ի հայկական տումարի :ՌՃՆԱ:, ԵԻ-
նեցաւ. սուր Եկեղեցիս յանուն սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի:
Կսնգնեցաւ. աւագանս մկրտութեան հոգւոյ և քովութեան մեղաց,
վարդավառի Երկուսարքի սուրն, յուրիս ամուոյ քանին:

(Բանոթ. Այս արձանադրութիւնը անձամբ չենք ստուգել:

Հրատ. Զալախանց, 163, Արիշան, 129:

20. ՄԻԿԱՅԱՆ (ՔԵՇԻՇՔԵՆԻ)

Այս գլուղի հին անունն ալժամ շփոթվել և մոռացվել է: Քաջբերունին գրում է, որ տեղացիք Քեշիշքենդին Փոնձաթաղ անունն են ապրիս առնելով—«հնասեր անձանց խոսքերից»¹, Նույնը ենթադրաբար կրկնում են նաև Արիշանը², Հովսեփյանը³ և Լալայանը⁴: Բայց մենք ապացուցել ենք, որ գլուղի հին անունը եղել է Նստորալեզ⁵:

Սա. Օրբելյանը տեղական արձանագրութիւնների, գրավոր աղբյուրների և անդադրական ալ յայտերից քաղելով պատմում է, որ Վարդանանց նահատակութիւնից հետո, հայկական մի գունդ նահանջում էր դեպի Շամար աշխարհն Արձախալս. պարսից զորքը վրա է հասնում Վալոց ձորում, Մողի և Լեղեղաց գետերի միջև գտնվող, մեծամեծ քարերով պարզսպված բլրաբերդի մոտ: Ընդհանուր վերջանում է հալ զնդի պարտութիւնը. շատերը նահատակվում են, մնացածները խուսափում են Լեղեղիս գետի վեր և մի քանի անգամ ընդհարվում հետապնդողների հետ՝ Շատին գլուղի մոտ, Անգեղձորում և Ուտինք ու Արտաբուլնք գլուղների մոտ:

Բլրաբերդի մոտ, առաջին անգամ նահատակվածների վրա Գլուտ կաթողիկոսի հրամանով շինվում է վկայարան Վանգնեցին ճիւղարան իմն երկնանման հրաշաքարտար շինածովք երկագմբէթս և ևւախորանս. և երկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և սքանչելի յօրինուածովք շինեալ.....բայց ալժամ լեւտ ասերման տեղւոյն եղև շինանիստ գեղջըկաց, և կոչեցաւ տեղին Նստորալեզ⁶:

Պատմագրի հիշատակած Լեղեղիս գետը հայտնի է, իսկ Մողի գետ ասելով պարզ է, որ հասկացել է Արփա գետը: Այդ երկու գետերի միացումից առաջացող եռանկյունու վրա գտնվում է ներկա Միկոյան գլուղը, իսկ նրա հարավային եզրին գտնվող բլրի գլխին ալժամ էլ

¹ «Արարա», 1889, էջ 52:

² «Միսական», էջ 129:

³ «Պաղարկյանք», Ա, էջ 41 և 237:

⁴ «Ազգ. Հանդ», XII, էջ 272:

⁵ «Տեղեկագիրք պատմութեան և զրականութեան ինստիտուտի, Եւ 1936 թ.—V գարի երկու. հուշարձան Սյունիքում:

⁶ Օտ. Օրբելյան, Պատմութիւն, գլխ. ԺԹ:

